ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ ՆՎԻՐՎԱԾ ՓՈՔՐ ԱՍԻԱՅԻ ՔԱՌԱԿՈՍՍԻ-ԽԱՉԱՁԵՎ ՀԱՏԱԿԱԳԾՈՎ ՏԱՃԱՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆԸ

Հույն ճարտարապետ և բյուզանդագետ Գեորգիոս Դիմիտրոկալլիսը 1978 թ. ուշադրավ մի աշխատություն է հրատարակել, որը նվիրված է Փոքր Ասիայի քառակուսի-խաչաձև հատակագծով տաճարների ուսումնասիրությանը։ Գրքի հեղինակը ի մի է հավաքել դժվարամատչելի տարբեր հանդեսներում ու մենագրություններում Փոքր Ասիայի հիշյալ տիպին վերաբերող տաճարների մասին հրատարակված նյութերը։ Այս ուսումնասիրությունը առաջին անգամ հրատարակվել է 1967 թ. Μικρασιατικὰ χρονικὰ («Փոքրասիական տարեգիրք») գիտական հանդեսի 13-րդ հատորում (էջ 81—183) և 1969 թ. արժանացել Νέα Σιωνίτις («Նոր Զմյուռնիայի կենտրոն») մրցանակին. նրա մասին տարբեր հանդեսներում լույս են տեսել դրվատական գրախոսականներ։ Առաջին հրատարակությունից ավելի քան մեկ տասնամյակ անց ճարտարապետական այդ տիպի մի շարք նորահայտ եկեղեցիների մասին արտասահմանում լույս են տեսել բազմաթիվ հոդվածներ[2], բայց Գ. Դիմիտրոկալլիսի աշխատությունը շարունակում է մնալ որպես հիշյալ նյութի վերաբերյալ մի ամբողջական, ընդհանրացնող գործ։ Նշելով, որ նման մենագրություն կամ հետազոտություն չկա ոչ հունարեն և ոչ եվրոպական լեզուներով, Գ. Դիմիտրոկալլիսը հիշատակում է միայն Գյուիյեի արդեն հնացած, ընդհանուր բնույթի երկու գործերը[3]։

Գրքի հեղինակը նշում է, որ Փոքր Ասիայի բյուզանդական հուշարձանները դեռևս անծանոթ են ուսումնասիրողներին։ Երկար տարածություններ, վատ հաղորդակցություններ և օրգում այլ հատուկ պայմաններ դժվարացնում են հետազոտողների գործը։ Ուսումնասիրության բավարար վիճակի առումով նա առանձնացնում է Տրապիզոնի հուշարձանները, որոնք դեռևս անցյալ դարից սկսած հետազոտվել են բազմաթիվ օտար և հույն մասնագետների կողմից։

Գ. Դիմիտրոկալլիսն իր գրքում նախ խոսում է քառակուսի-խաչաձև հատակագծի առաջացման պայմանների մասին և ցույց տալիս, որ ներկայումս ընդունված է Գ. Միյեի կար-

---

[1] Γεωργίου Δημητροκαλλή, Οι σταυροειδεῖς εγγεγραμμένοι ναοί τῆς Μικρᾶς Ἀσίας, Ἀθῆναι. 1978, 122 σελ., 96 εικ. *Գեորգիոս Դիմիտրոկալլիս, Փոքր Ասիայի քառակուսի-խաչաձև հատակագծով տաճարներ, Աթենք, 1978, 122 էջ, 96 նկար։*

[2] Marcel Restle, Byzantine Wall Paintings of Asia Minor. Recklinghausen, 1967 vol. I, pp. 108, 110, 126, pl. 487, *նույնի*, Zwei Hohlenkirchen in Haci Ismail Dere bei Ayvali („Jahrbuch der Österreichischen Byzantinistik", Bd. XXII (1973), S. 260), Hans Buchwald, Sardis Church E —A. Preliminary Report („Jahrbuch der Österreichischen Byzantinistik", Bd. XXVI (1977), SS. 265—299, Abb. 1—25), Nicole Thierry, Etudes Cappadociennes—Region du Hasan Dagi, Complements pour 1974 („Cahiers Archéologiques", vol. XXIV (1975), p. 185, figg. 3, 5), Nezit Firatli, Türk Tarih Kurumu Basimevi, Ankara, 1972, p. 125: Semavi Eyice, Pireli, Kassim, 1974, pp. 10—11, Tarihde Bolu („Türkiye Turing ve Otomobil Kurumu Belleteni", Mayis—Hezidan, 1975).

[3] Guyer, Die Bedeutung der christlichen Baukunst des inneren Kleinasiens für die allgemeine Kunstgeschichte („Byzantinische Zeitschrift", Bd. XXXIII (1933), S. 78—104, 313—330), *նույնի*, Les monuments chrétiens en Asie Mineure, „Atti III Congresso Internazionale di Archeologia Cristiana, Ravenna, 1932", Roma, 1934, pp. 433—458.

միրը, ըստ որի հիշյալ տիպը առաջացել է «աղատ խաչիս» և եռանավ բազիլիկայի հատակագծերի միաձուլումից։ Որպես Հունաստանում հանդիպող նմանօրինակ հնագույն հուշարձաններ, Գ. Դիմիտրոկալլիսը նշում է Բեոտիայի Սկրիպու տաճարը (կառուցված 873—874 թթ.), Սկիրոսի բերդի եպիսկոպոսարանը (895 թ.) և մի քանի այլ կառույցներ։ Փոքր Ասիայի հիշյալ տիպի հուշարձանների մասին խոսելիս, հեղինակը վկայակոչում է Գ. դը Ժերֆանիոնի և Ժ. Լաֆոնտենի կարծիքները Կապադովկիայի տաճարների վերաբերյալ։ Ըստ նրանց դրանք թվագրվում են X դ. և համարվում Կոստանդնուպոլսի ազդեցությունը կրող։ Գ. Դիմիտրոկալլիսը չի բաժանում այս կարծիքը՝ մատնանշելով մայրաքաղաքի և Կապադովկիայի տաճարների ճարտարապետական դպրոցի տարբերությունները։ Այստեղ նա բերում է Ռ. Մ. Ռամզեյի և Ջ. Լ. Բելլի միանգամայն տարբեր կարծիքները, որոնց համաձայն կենտրոնական Փոքր Ասիայի տաճարներն ավելի մոտ են կանգնած ներքին Ասիային, Հայաստանին և Միջագետքին, քան Կոստանդնուպոլսին և ծովափնյա երկրներին։ Գ. Դիմիտրոկալլիսը գտնում է, որ Ռամզեյն ու Բելլը իրենց սեփական դիտարկումներով էն հանդել այդ տեսակետին, և ոչ թե Ստրժիգովսկու ազդեցությամբ։

Անցնելով հիմնական հարցին, Գ. Դիմիտրոկալլիսը գրում է. «Ինչ վերաբերում է ամբողջ Փոքր Ասիային, ապա պետք է ընդունենք Հայաստանի ազդեցությունը, որտեղ քառակուսի-խաչաձև հատակագծով տաճարներ կային դեռևս VII դարի սկզբից..., ինչպես, օրինակ, Բագարանի, Էջմիածնի, Թալինի, Վաղարշապատի՝ Դայանեի, Մրենի տաճարները»։ Հեղինակը չի բացառում այդ տիպի տաճարների առաջացումը հենց Փոքր Ասիայում և բերում է հույն մասնագետ Գ. Սոտիրիուի կարծիքը, որի համաձայն նման հատակագծի առաջին քայլերն առկա են Պոնտոսի Հերակլիայի տաճարում։ Գ. Դիմիտրոկալլիսը վկայակոչում է Փոքր Ասիայի IV—VI դդ. թվագրվող, անգամ II—III դդ. Սիրիայի Մուսմիե վայրում գտնվող Ցենայի հռոմեական մի հուշարձանի մասին այլ ուսումնասիրողների կարծիքները, որոնց համաձայն վերջինիցս են ծագել հայկական և բյուզանդական՝ քառակուսի-խաչաձև հատակագծով տաճարները։ Բայց Գ. Դիմիտրոկալլիսի համոզմամբ, առայժմ այդ ենթադրությունն ընդունել չի կարելի, քանզի հիշյալ հուշարձանն աշխարհագրականորեն ու պատմականորեն շատ է առանձնացած։ «Ավելի շուտ պետք է բացառենք որևէ կապ դրանց միջև»,— գրում է նա։

Այստեղ հեղինակը խոսում է Փոքր Ասիայի քառակուսի-խաչաձև հատակագծով տաճարների ազդեցության մասին՝ իտալական միջնադարյան ճարտարապետության վրա։

«Մորֆոլոգիական տարբերություններ» վերնագիրը կրող բաժնում Գ. Դիմիտրոկալլիսը կանգ է առնում հիշյալ հատակագծով տաճարների ճարտարապետական տարբերությունների վրա, ինչպիսիք են 1) հատակագիծ, 2) խորան և աբսիդ, 3) մույթեր, 4) գմբեթներ, 5) աղեղներ ու կամարներ, 6) շինարարական նյութեր և այլն։

Գրքի ամենածավալուն բաժնում տրվում է հիշյալ տիպի 43 տաճարների ցուցակը՝ յուրաքանչյուր հուշարձանի մասին համառոտ տեղեկություններով, նկարներով ու հատակագծերով, մանրամասն մատենագիտությամբ։ Արևմտյան Հայաստանի բնակավայրերի հուշարձաններից հիշատակված են Իսպիրի (Սպեր, XIII դ.), Բաբերդի, Սվազի (Սեբաստիա, X—XII դդ.) եկեղեցիները։ Սեբաստիայի բյուզանդական փոքր եկեղեցու մասին, որ 1649 թ. նկարագրել է Էվլիյա Չելեբին և որն այսօր մզկիթի է վերածված, Գ. Դիմիտրոկալլիսը գրում է, թե հայտնի չէ, սկզբում այն հայկակա՞ն է եղել, թե հունական։

Գիրքն ունի ֆրանսերեն ամփոփում։ Գեորգիոս Դիմիտրոկալլիսի փոքրիկ, ընդհանրացնող գիրքը կարող է օգտակար լինել նաև հայ միջնադարյան ճարտարապետության մասնագետներին։

ՀՐԱՉ ԲԱՐԹԵՂՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր